**Երկրորդ ընթերցում**
**Լրամշակված նախագիծ**

**Պ-1264-20.02.2026,13.04.2026-ՊԻ-011**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՕՐԵՆՔԸ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

***Հոդված 1.*** 2021 թվականի մայիսի 5-ի Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 393-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասի 6-րդ կետում «կամ» շաղկապը փոխարինել «,» կետադրական նշանով.

2) 2-րդ մասի 7-րդ կետում «՝» կետադրական նշանը փոխարինել «կամ» շաղկապով.

3) 2-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 8-րդ կետով.

«8) տեղեկատվական կամ հաղորդակցական տեխնոլոգիաներն օգտագործելով՝».

4) 2-րդ մասում «չորսից ութ» բառերը փոխարինել «հինգից տասը» բառերով

5) 3-րդ մասի 1-ին կետում «կամ» շաղկապը փոխարինել «,» կետադրական նշանով.

6) 3-րդ մասի 2-րդ կետում «՝» կետադրական նշանը փոխարինել «կամ» շաղկապով.

7) 3-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 3-րդ կետով.

«3) անչափահասի ներգրավմամբ կամ անչափահասի նկատմամբ՝»:

8) 3-րդ մասում «վեցից տասներկու» բառերը փոխարինել «ութից տասնհինգ» բառերով

***Հոդված 2.*** Օրենսգրքի 394-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասի 2-րդ կետում «կամ» շաղկապը փոխարինել «,» կետադրական նշանով.

2) 2-րդ մասի 3-րդ կետում «՝» կետադրական նշանը փոխարինել «կամ» շաղկապով.

3) 2-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 4-րդ կետով.

«4) տեղեկատվական կամ հաղորդակցական տեխնոլոգիաներն օգտագործելով՝».

4) 3-րդ մասի 1-ին կետում «կամ» շաղկապը փոխարինել «,» կետադրական նշանով.

5) 3-րդ մասի 2-րդ կետում «՝» կետադրական նշանը փոխարինել «կամ» շաղկապով.

6) 3-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 3-րդ կետով.

«3) անչափահասի ներգրավմամբ կամ անչափահասի նկատմամբ՝»:

***Հոդված 3.*** Օրենսգրքի 396-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի 2-րդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«պատժվում է տուգանքով՝ առավելագույնը քսանապատիկի չափով, կամ հանրային աշխատանքներով՝ առավելագույնը հարյուր հիսուն ժամ տևողությամբ, կամ ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:»

2) 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է՝

1) խոշոր չափերով կամ

2) տեղեկատվական կամ հաղորդակցական տեխնոլոգիաներն օգտագործելով՝

պատժվում է տուգանքով՝ քսանապատիկից քառասնապատիկ չափով, կամ հանրային աշխատանքներով՝ հարյուր հիսունից երկու հարյուր հիսուն ժամ տևողությամբ, կամ ազատության սահմանափակմամբ՝ մեկից երեք տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ մեկից երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ մեկից - չորս տարի ժամկետով:».

3) 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«3. Սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ մասով նախատեսված արարքը, որը կատարվել է՝

1) առանձնապես խոշոր չափերով կամ

2) անչափահասի ներգրավմամբ՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից վեցտարի ժամկետով:»:

***Հոդված 4.*** Օրենսգրքի 397-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասի 2-րդ կետում «կամ» շաղկապը փոխարինել «,» կետադրական նշանով.

2) 2-րդ մասի 3-րդ կետում «՝» կետադրական նշանը փոխարինել «կամ» շաղկապով.

3) 2-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 4-րդ կետով.

«4) տեղեկատվական կամ հաղորդակցական տեխնոլոգիաներն օգտագործելով՝».

4) 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ մասով նախատեսված արարքը, որը կատարվել է՝

1) հանցավոր կազմակերպության կողմից կամ

2) անչափահասի ներգրավմամբ՝

պատժվում է ազատազրկմամբ՝ հինգից տասը տարի ժամկետով:»:

***Հոդված 5.*** Օրենսգրքի 398-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասի 1-ին կետում «կամ» շաղկապը փոխարինել «,» կետադրական նշանով.

2) 2-րդ մասի 2-րդ կետում «՝» կետադրական նշանը փոխարինել «կամ» շաղկապով.

3) 2-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 3-րդ կետով.

«3) տեղեկատվական կամ հաղորդակցական տեխնոլոգիաներն օգտագործելով՝».

4) 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ մասով նախատեսված արարքը, որը կատարվել է՝

1) հանցավոր կազմակերպության կողմից կամ

2) անչափահասի ներգրավմամբ՝

պատժվում է ազատազրկմամբ՝ վեցից տասներկու տարի ժամկետով:»:

***Հոդված 6.*** Օրենսգրքի 399-րդ հոդվածում՝

1) 3-րդ մասի 1-ին կետում «կամ» շաղկապը փոխարինել «,» կետադրական նշանով.

2) 3-րդ մասի 2-րդ կետում «՝» կետադրական նշանը փոխարինել «կամ» շաղկապով.

3) 3-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 3-րդ կետով.

«3) անչափահասի ներգրավմամբ՝»:

***Հոդված 7.*** Օրենսգրքի 401-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 2-րդ մասով՝

«2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է անչափահասի նկատմամբ՝

պատժվում է ազատազրկմամբ՝ չորսից ութ տարի ժամկետով:»:

***Հոդված 8.*** Օրենսգրքի 402-րդ հոդվածում

1) 2-րդ մասի 1-ին կետում «անչափահասի նկատմամբ» բառերը փոխարինել «տեղեկատվական կամ հաղորդակցական տեխնոլոգիաներն օգտագործելով» բառերով.

2) 2-րդ մասի 5-րդ կետը «խոցելիությունը» բառից հետո լրացնել «, անօգնական վիճակը» բառերով:

3) 3-րդ մասի 1-ին կետում «կամ» շաղկապը փոխարինել «,» կետադրական նշանով.

4) 3-րդ մասի 2-րդ կետում «՝» կետադրական նշանը փոխարինել «կամ» շաղկապով.

5) 3-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 3-րդ կետով.

«3) կատարվել է անչափահասի նկատմամբ՝»:

***Հոդված 9.*** Օրենսգրքի 404-րդ հոդվածի 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ մասով նախատեսված արարքը, որ կատարվել է՝

1) հանցավոր կազմակերպության կողմից կամ

2) անչափահասի ներգրավմամբ՝

պատժվում է ազատազրկմամբ՝ չորսից ութ տարի ժամկետով:»:

***Հոդված 10.*** Օրենսգրքի 405-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասի 4-րդ կետում «կամ» շաղկապը փոխարինել «,» կետադրական նշանով.

2) 2-րդ մասի 5-րդ կետում «՝» կետադրական նշանը փոխարինել «կամ» շաղկապով.

3) 2-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 6-րդ կետով.

«6) տեղեկատվական կամ հաղորդակցական տեխնոլոգիաներն օգտագործելով՝».

4) 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ մասով նախատեսված արարքը, որը կատարվել է՝

1) հանցավոր կազմակերպության կողմից կամ

2) անչափահասի ներգրավմամբ կամ անչափահասի նկատմամբ՝

պատժվում է ազատազրկմամբ՝ չորսից ութ տարի ժամկետով:»

***Հոդված 11.*** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՏԵՂԵԿԱՆՔ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

*~~Առաջին ընթերցում~~*
*Երկրորդ ընթերցում*

*Պ-1264-20.02.2026,13.04.2026-ՊԻ-011/1*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՕՐԵՆՔԸ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

***Հոդված 1.*** 2021 թվականի մայիսի 5-ի Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 393-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասի 6-րդ կետում «կամ» շաղկապը փոխարինել «,» կետադրական նշանով.

2) 2-րդ մասի 7-րդ կետում «՝» կետադրական նշանը փոխարինել «կամ» շաղկապով.

3) 2-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 8-րդ կետով.

«8) տեղեկատվական կամ հաղորդակցական տեխնոլոգիաներն օգտագործելով՝».

4) 2-րդ մասում «չորսից ութ» բառերը փոխարինել «հինգից տասը» բառերով

5~~4~~) 3-րդ մասի 1-ին կետում «կամ» շաղկապը փոխարինել «,» կետադրական նշանով.

6~~5~~) 3-րդ մասի 2-րդ կետում «՝» կետադրական նշանը փոխարինել «կամ» շաղկապով.

7~~6~~) 3-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 3-րդ կետով.

«3) անչափահասի ներգրավմամբ կամ անչափահասի նկատմամբ՝»:

8) 3-րդ մասում «վեցից տասներկու» բառերը փոխարինել «ութից տասնհինգ» բառերով

***Հոդված 2.*** Օրենսգրքի 394-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասի 2-րդ կետում «կամ» շաղկապը փոխարինել «,» կետադրական նշանով.

2) 2-րդ մասի 3-րդ կետում «՝» կետադրական նշանը փոխարինել «կամ» շաղկապով.

3) 2-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 4-րդ կետով.

«4) տեղեկատվական կամ հաղորդակցական տեխնոլոգիաներն օգտագործելով՝».

4) 3-րդ մասի 1-ին կետում «կամ» շաղկապը փոխարինել «,» կետադրական նշանով.

5) 3-րդ մասի 2-րդ կետում «՝» կետադրական նշանը փոխարինել «կամ» շաղկապով.

6) 3-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 3-րդ կետով.

«3) անչափահասի ներգրավմամբ կամ անչափահասի նկատմամբ՝»:

***Հոդված 3.*** Օրենսգրքի 396-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի 2-րդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«պատժվում է տուգանքով՝ առավելագույնը քսանապատիկի չափով, կամ հանրային աշխատանքներով՝ առավելագույնը հարյուր հիսուն ժամ տևողությամբ, կամ ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:»

2) 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է՝

1) խոշոր չափերով կամ

2) տեղեկատվական կամ հաղորդակցական տեխնոլոգիաներն օգտագործելով՝

պատժվում է տուգանքով՝ քսանապատիկից քառասնապատիկ ~~տասնապատիկից երեսնապատիկի~~ չափով, կամ հանրային աշխատանքներով՝ ~~հարյուրից~~ հարյուր հիսունից երկու հարյուր հիսուն ժամ տևողությամբ, կամ ազատության սահմանափակմամբ՝ մեկից երեք տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ մեկից երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ մեկից ~~երեք~~ - չորս տարի ժամկետով:».

3~~2~~) 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«3. Սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ մասով նախատեսված արարքը, որը կատարվել է՝

1) առանձնապես խոշոր չափերով կամ

2) անչափահասի ներգրավմամբ՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից վեց~~երկուսից հինգ~~ տարի ժամկետով:»:

***Հոդված 4.*** Օրենսգրքի 397-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասի 2-րդ կետում «կամ» շաղկապը փոխարինել «,» կետադրական նշանով.

2) 2-րդ մասի 3-րդ կետում «՝» կետադրական նշանը փոխարինել «կամ» շաղկապով.

3) 2-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 4-րդ կետով.

«4) տեղեկատվական կամ հաղորդակցական տեխնոլոգիաներն օգտագործելով՝».

4) 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ մասով նախատեսված արարքը, որը կատարվել է՝

1) հանցավոր կազմակերպության կողմից կամ

2) անչափահասի ներգրավմամբ՝

պատժվում է ազատազրկմամբ՝ հինգից տասը տարի ժամկետով:»:

***Հոդված 5.*** Օրենսգրքի 398-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասի 1-ին կետում «կամ» շաղկապը փոխարինել «,» կետադրական նշանով.

2) 2-րդ մասի 2-րդ կետում «՝» կետադրական նշանը փոխարինել «կամ» շաղկապով.

3) 2-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 3-րդ կետով.

«3) տեղեկատվական կամ հաղորդակցական տեխնոլոգիաներն օգտագործելով՝».

4) 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ մասով նախատեսված արարքը, որը կատարվել է՝

1) հանցավոր կազմակերպության կողմից կամ

2) անչափահասի ներգրավմամբ՝

պատժվում է ազատազրկմամբ՝ վեցից տասներկու տարի ժամկետով:»:

***Հոդված 6.*** Օրենսգրքի 399-րդ հոդվածում՝

1) 3-րդ մասի 1-ին կետում «կամ» շաղկապը փոխարինել «,» կետադրական նշանով.

2) 3-րդ մասի 2-րդ կետում «՝» կետադրական նշանը փոխարինել «կամ» շաղկապով.

3) 3-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 3-րդ կետով.

«3) անչափահասի ներգրավմամբ՝»:

***Հոդված 7.*** Օրենսգրքի 401-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 2-րդ մասով՝

«2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է անչափահասի նկատմամբ՝

պատժվում է ազատազրկմամբ՝ չորսից ութ տարի ժամկետով:»:

***Հոդված 8.*** Օրենսգրքի 402-րդ հոդվածում

1) 2-րդ մասի 1-ին կետում «անչափահասի նկատմամբ» բառերը փոխարինել «տեղեկատվական կամ հաղորդակցական տեխնոլոգիաներն օգտագործելով» բառերով.

2) 2-րդ մասի 5-րդ կետը «խոցելիությունը» բառից հետո լրացնել «, անօգնական վիճակը» բառերով:

3) 3-րդ մասի 1-ին կետում «կամ» շաղկապը փոխարինել «,» կետադրական նշանով.

4) 3-րդ մասի 2-րդ կետում «՝» կետադրական նշանը փոխարինել «կամ» շաղկապով.

5) 3-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 3-րդ կետով.

«3) կատարվել է անչափահասի նկատմամբ՝»:

***Հոդված 9.*** Օրենսգրքի 404-րդ հոդվածի 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ մասով նախատեսված արարքը, որ կատարվել է՝

1) հանցավոր կազմակերպության կողմից կամ

2) անչափահասի ներգրավմամբ՝

պատժվում է ազատազրկմամբ՝ չորսից ութ տարի ժամկետով:»:

***Հոդված 10.*** Օրենսգրքի 405-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասի 4-րդ կետում «կամ» շաղկապը փոխարինել «,» կետադրական նշանով.

2) 2-րդ մասի 5-րդ կետում «՝» կետադրական նշանը փոխարինել «կամ» շաղկապով.

3) 2-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 6-րդ կետով.

«6) տեղեկատվական կամ հաղորդակցական տեխնոլոգիաներն օգտագործելով՝».

4) 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ մասով նախատեսված արարքը, որը կատարվել է՝

1) հանցավոր կազմակերպության կողմից կամ

2) անչափահասի ներգրավմամբ կամ անչափահասի նկատմամբ՝

պատժվում է ազատազրկմամբ՝ չորսից ութ տարի ժամկետով:»

***Հոդված 11.*** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**ԱՄՓՈՓԱԹԵՐԹ**

**ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Պ-1264-20.02.2026,13.04.2026-ՊԻ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ**

| № | Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը | Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը | Առաջարկություն (փոփոխություն, լրացում) | Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը | Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը |
|---|---|---|---|---|---|
| | | | | | |
| 1. | ***ՀՀ կառավարություն*** | **Նախագծի 1-ին հոդված** | Թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով առաջարկում ենք խստացնել դրա դեմ տարվող պատժողական քաղաքականությունը /ամփոփաթերթի 1-5-րդ առաջարկներ/:<br>Նախագծի 1-ին հոդվածում առաջարկում ենք լրացնել նոր 4-րդ մաս՝ հետևյալ բովանդակությամբ՝<br>«4) 2-րդ մասում «չորսից | Ընդունվել է:<br>Կատարվել է համապատասխան փոփոխություն: | Ընդունվել է: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | ութ» բառերը փոխարինել «հինգից տասը» բառերով»: Ըստ այդմ, առաջարկում ենք վերանայել հոդվածի մասերի համարակալումը: | | |
| 2. | ***ՀՀ կառավարություն*** | **Նախագծի 1-ին հոդված** | Նախագծի 1-ին հոդվածում առաջարկում ենք լրացնել նոր 8-րդ մաս՝ հետևյալ բովանդակությամբ՝ «8) 3-րդ մասում «վեցից տասներկու» բառերը փոխարինել «ութից տասնհինգ» բառերով»: | Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն: | Ընդունվել է: |
| 3. | ***ՀՀ կառավարություն*** | Նախագծի 3-րդ հոդված | Նախագծի 3-րդ հոդվածը առաջարկում ենք ավելացնել նոր՝ 1-ին մասով՝ հետևյալ բովանդակությամբ՝ «1) 1-ին մասի 2-րդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «պատժվում է տուգանքով՝ առավելագույնը քսանապատիկի չափով, կամ հանրային աշխատանքներով՝ առավելագույնը հարյուր հիսուն ժամ տևողությամբ, | Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն: | Ընդունվել է: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | կամ ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:» | | |
| 4. | ***ՀՀ կառավարություն*** | **Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մաս /լրամշակված 2-րդ մաս/** | Նախագծի 3-րդ հոդվածի «պատժվում է տուգանքով՝ տասնապատիկից երեսնապատիկի չափով, կամ հանրային աշխատանքներով՝ հարյուրից երկու հարյուր ժամ տևողությամբ, կամ ազատության սահմանափակմամբ՝ մեկից երեք տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ մեկից երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ մեկից երեք տարի ժամկետով:».» բառերը | Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն: | Ընդունվել է: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | փոխարինել «պատժվում է տուգանքով՝ քսանապատիկից քառասնապատիկի չափով, կամ հանրային աշխատանքներով՝ հարյուր հիսունից երկու հարյուր հիսուն ժամ տևողությամբ, կամ ազատության սահմանափակմամբ՝ մեկից երեք տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ մեկից երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ մեկից չորս տարի ժամկետով:».» բառերով: | | |
| 5. | ***ՀՀ կառավարություն*** | **Նախագծի 3-րդ հոդվածի 2-րդ մաս /լրամշակված 3-րդ մաս/** | Առաջարկում ենք Նախագծի 3-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «3) 3-րդ մասում «երկուսից հինգ» բառերը փոխարինել «երեքից վեց» բառերով: | Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն: | Ընդունվել է: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 6. | *ՀՀ կառավարություն* | **Վարչական իրավախախտումների վերաբերյալ հայաստանի հանրապետության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ** | Նախագծի կարգավորման առարկան և վերոնշյալ առաջարկները առաջարկում ենք համապատասխան փոփոխություններ կատարել նաև Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում՝ ապահովելով իրավակարգավորումների համաչափությունն ու համակարգային ամբողջականությունը: Միաժամանակ, նախընթաց օրենսդրական վերանայումների արդյունքում ոստիկանության ծառայողին կամ զինծառայողին վիրավորելու և ոստիկանության ծառայողի օրինական պահանջը չկատարելու վերաբերյալ վարչական իրավախախտումների գործերի քննության | Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն: | Ընդունվել է: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | իրականացումը վերապահվել է ՀՀ ներքին գործերի նախարարությանը: Հատկանշական է, որ նշված գործերի քննությունը ՀՀ ներքին գործերի նախարարությանը վերապահելն առաջացնում է էական կազմակերպչական խոչընդոտներ, որոնք ազդեցություն են ունենում նաև վարույթի պատշաճ իրականացման վրա: Մասնավորապես, ի տարբերություն այդ գործերով արձանագրություն կազմելու իրավասություն ունեցող Ոստիկանության, որի ծառայողները ներկայացված են ՀՀ ամբողջ տարածքում, ՀՀ ներքին գործերի նախարարության իրավասու աշխատակիցները, որպես | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | կանոն, տեղակայված են նախարարության կենտրոնական մարմնում, իսկ նման գործերի տարածվածությունն ընդգրկում է Հայաստանի Հանրապետության ողջ տարածքը: Բացի այդ, ՀՀ ներքին գործերի նախարարությունը պետք է օժտված լինի հսկողական իրավազորությամբ, մասնավորապես, որպես վերադաս վարչական մարմին, ըստ անհրաժեշտության, գնահատի ենթակա մարմինների, տվյալ դեպքում՝ Ոստիկանության կողմից կայացված ակտերի իրավաչափությունը:<br>Ըստ այդմ՝ առաջարկում ենք Նախագիծը լրացնել նոր՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ հայաստանի հանրապետության օրենսգրքում | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծով՝ հետևյալ բովանդակությամբ՝<br>«ՆԱԽԱԳԻԾ<br><br>ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ<br>Օ Ր Ե Ն Ք Ը<br><br>ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ<br><br>**Հոդված 1.** 1985 թվականի դեկտեմբերի 6-ի Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 44.1-ին հոդվածում՝ | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | 1) 1-ին մասում «երկուհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի» բառերը փոխարինել «չորսհարյուրապատիկից ութհարյուրապատիկի» բառերով,<br>2) 2-րդ մասում «չորսհարյուրապատիկից ութհարյուրապատիկի» բառերը՝ «ութհարյուրապատիկից հազարվեցհարյուրապատիկի» բառերով:<br><br>**Հոդված 2.** Օրենսգրքի 44.2-րդ հոդվածում՝<br>1) 1-ին մասում «հարյուրապատիկից երկուհարյուրապատիկի» բառերը փոխարինել «երկուհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի» բառերով,<br>2) 2-րդ մասում «երկուհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի» բառերը՝ «չորսհարյուրապատիկից ութհարյուրապատիկի» բառերով: | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | **Հոդված 3.** Օրենսգրքի 110.2-րդ հոդվածում՝<br>1) 1-ին մասում «հնգապատիկից տասնապատիկի» բառերը փոխարինել «ութսունապատիկից հարյուրապատիկի» բառերով,<br>2) 2-րդ մասում՝ «տասնապատիկից երեսնապատիկի» բառերը՝ «հարյուրապատիկից հարյուրքսանապատիկի» բառերով:<br><br>**Հոդված 4.** Օրենսգրքի 178-րդ հոդվածի 1-ին մասում «երեսնապատիկի» բառը փոխարինել «հիսնապատիկից հարյուրապատիկի» բառերով:<br><br>**Հոդված 5.** Օրենսգրքի 224-րդ հոդվածի 1-ին մասում «172.2-րդ,» բառից հետո լրացնել «172.3-րդ,» բառը, իսկ «181-րդ,» բառից հետո՝ «182-րդ,» բառը:<br><br>**Հոդված 6.** Օրենսգրքի 224. | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | 3-րդ հոդվածի 1-ին մասից հանել «172.3-րդ, 182-րդ,» բառերը:<br><br>**Հոդված 7.** Օրենսգրքի 254-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետից հանել «172.3,» և «, 182» թվերը:<br><br>**Հոդված 8.** Օրենսգրքի 267-րդ հոդվածի 2-րդ մասից հանել «, 182» թիվը:<br><br>**Հոդված 9.** Օրենսգրքի 277-րդ հոդվածի 2-րդ մասում «, 180[1] և 182» բառերը փոխարինել «և 180[1]» բառերով:<br><br>**Հոդված 10**. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:» | | |